



Տարեկան դիմե 6 Արծաթ Մեծիկի:
Վեցամսեայ 3 1/2
Մեկ ծանուցումը տուրի 2 դուրուշ է
Թանգարանի քանակի են:
Ստորագրութիւնները ամսեայ 1 ին
եւ 1 ծիկ կը սկսին:

Դուրս երթալիք լրագիրներուն ճամբու
ծախքը առնողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ ճամբու կամ որ
եւ ինչ գրութիւն խմբագրին պիտի
ուղղուի. եւ ասոց ճամբուն ծախ
քը խրկողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 15 ԴԵՏԵՄԲԵՐ

ՊՐԱՅԻՆ ԶԵՆԱԳՐԱԿԱՆ
ԼՈՒՐԵՐԸ

Լոնտոն 15 դեկտ.

Արմալը, ընդհանրապէս թուլ եւ իջնա-
լու վրայ: Յորին, Դանուր 54 57. — Կիրքա
Թայրան 58 50. — Եղիպապոլսէն իւրացի
50 50. — Գարի 24.

Քոնստանտին 95 3/4. — Օսմանեան 58 1/2.
Փոխառութիւն 69 3/4. — Նորը 74. — Շաքար
կը բռնուի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի քաղաքացիացիք եւ լրագ-
րաց ուղարկութիւնն այս օրերս Յունաս-
տանի խնդրոյն վրայ ամբողջութեամբ ըլլալով,
Իտալիոյ կամ Հռոմի խնդրոյն վրայ կան
մը մոռցուածի պէս կը թուեն: Եւրոպա-
կան լրագրաց վերջին թերթերը նորին ըզ-
բաղել սկսած են Հռոմի խնդրոյն: Բայց
բոլոր տուած լուրերնին բերանայի զօրոյ-
նեւրո՝ այսինքն « Լրագրութիւն » վրայ հիմ-
նեալ են:

Ըստ խոսքին նայելով՝ Հռոմի նա-
խորդ դեպքան Լալայէթ մարքին այս օ-
րերս Կարօյէն կայսեր հետ երկար խո-
սակցութիւն մը ըրեր է Հռոմի խնդրոյն
վրայ, եւ կըսէր է վերջապէս զանի համ-
բել թէ այժմեան արտաքին գործոց պաշ-
տօնեայ Պ. Տրուսի ալ Լալայէթ ձեռք
առած քաղաքականութիւնը փոփոխու-
եւ: Միւս կողմէն Կարօյէն իշխանն ալ
կը շարունակէ եղեր մարտի 15 նորատ
Իտալիոյ եւ ընդդէմ Հռոմի աշխարհ-
հախան իշխանութեանը: Երկար գիւրք մը
շինեւր է այս խնդրոյն վրայ եւ կայսեր յանձ-
նեւր է: Եւս գիւրքն եւ Լալայէթ մարքի-
զին գիտութիւնները կայսեր մտաւր վը-
րայ մեծ ազդեցութիւն ընելով՝ քաղա-
քականութեան փոփոխութիւն մը կը պա-
րաստեն եղեր:

Յունաստանէ եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ նոր թագաւորի ընտ-
րութեան քուէարկութիւնը վերջացեր
է: Գրեթէ ամեն ընտրողներն Եւրոպ-
ոյ Եւրոպա արքայորդին քուէ տուեր
են, բայց այս քուէարկութեան ապար-
դիւն ըլլալուն տարակոյս չէ մնացած:

Եւրոպայի լրագիրները Լոնտոնի հե-
լեւանի դեպքան Պ. Թորքիլթոնին հե-
տեւալ ուղարկութեան արժանի նամակը
կը հրատարակեն որ Յունաստանի առժա-
մանակեայ կառավարութեան գրուած է:

« Լոնտոն 10 դեկտ. »

« Լորտ Ուլսթը Լինձի յանձնեց իմա-
ցնել Յունաստանի կառավարութեան,
թէ Եւրոպայի թագաւորին կուզէ յոնիական
կղզիներուն Յունաստանի հետ միանալը
առաջարկել 1815ի նախորդումներն ստո-
րագրող տէրութեանց: »

« Թագաւորին այս բանը պիտի ընէ՝
սա պայմանաւ որ Յունաստանի թագա-
ւորութիւնը առժամանակեայ կառավա-
րութեան հրատարակած առաջին յայտա-
ւարութիւններուն համեմատ կազմակեր-

պի, եւ նորինալը թագաւորին իրեն անհա-
ճոյ մէկը չըլլայ: »

« Եւս պայմանաւ՝ նոր թագաւորն
Յոնիական կղզիներուն ալ տէր պիտի ըլ-
լայ: »

« Լորտ Ուլսթը՝ թագաւորին պէս ու-
րոշումը փողոսեան՝ օրը պիտի ծանուցանէ
Պ. Լինձիայի նախորդումներն ստորագրող
տէրութեանց գեղարկներուն: »

« Յարդի Պ. Լինձի շարաթ օրը
հոսկէց ձեռն ալ պիտի ելնէ յատուկ պաշ-
տօնով մը Եւրոպայի դաւաճ համար: »

Եւրոպայի գրուած նամակի մը խոս-
քին նայելով, Պ. Լինձի պաշտօնը
Բորթուկոյի Ֆերմանտա թագաւորին
ընտրութիւնը առաջարկել ու պաշտօնա-
նել պիտի ըլլայ:

Ուստի կայսրն ալ իր բանակի օգ-
նակներէն Բորթուկոյի սեպուհ հը Յունաստան
ղեկեւր է:

Եւրոպայի Տէյք-Եւրոպայի լրագիրը
հակառակի Բորթուկոյի Ֆերմանտա
թագաւորին Յունաստանի թագաւոր ա-
ռաջարկներուն: « Եւրոպայի տէրութեանն-
ը, կըսէ, Յունաստանի թագաւոր մը
առաջարկելով՝ կաւրեն անմիջամտութեան
սկզբունքը: Եւրոպա բաւական ներու-
թիւն կընէ Օթմը թագաւոր գնելով:
Թագաւոր յոյները որ աղաւթութեամբ ի-
րենց ուզածն ընտրեն: Եւրոպա պէտք
չէ բանի մը խառնուի: »

Բերքապուրիի Ժուռնալ լրագիրն
ալ հետեւեալ տողերը կը հրատարակէ:

« Այնպէս հաստատել որ մեծ տե-
րութիւններն համաձայնած են 1830ի նա-
խորդումն հաստատ բռնելու վրայ: Բայց
առաջարկելիք ընտրելին վրայ դեռ չեն
համաձայնած: Ուստի ոչ մէկ ընտրելի
մը առաջարկած չէ: »

Քարանդէ եկած լուրերը խիստ ծան-
րակշիւ են: Եւրոպայի տէրութեանց
հիւսիսայիններն իրենց կեանքը յարաժա-
մ փոխելու մէջ տեսնելով, անգլիական պա-
տերապի նաւ մը քաղաք են, եւ որոշե-
րն որ Վաղղիացոյ, Եւրոպայաց, Ռու-
սաց եւ Եւրոպայաց պատերազմական
նաւերն սպառնական ցոյց մը ընեն Քա-
րանդէ Եւրոպայի մայրաքաղաքին դէմ:

Թուրքիոյ ձախորդ լուրեր եկան:

Թուրքիոյ ըստած՝ արաբները ողջ ել-
նելով, պէյին եղբայրը բազմութիւն դրօշ
վայելն դադեր է, բայց ապստամբները
դժուար եւ անմատոյց գիւրքեր բռնած ըլ-
լալով, պէյին դրօշերն յաղթուեր են:

Թուրքիոյ ժողովուրդն ալ դժգոհ
են եղեր պէյին քանի մը միջին զուրուշ-
թութիւն հանելուն դէմ, որ հարկերն 12
տոկոսով՝ ինը տարին վճարելի փոխառու-
թիւն մըն է, եւ այս պատճառաւ պատե-
րագական եւ ծովային գործոց եւ ելու-
տից վերատեսուէներն ալ հրաժարական
տուեր են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքին մէջ բացուելիք տը-

ուստահանդէսի շէնքին շինութիւնն անց-
եալ շաբթու սկսաւ եւ մեծ փութով
յառաջ կը տարուի: Ար. կարծուի թէ
ամուս դիւնն առաջ շրջապատը կը լինայ
եւ փախ ծածըր կ'սկսուի, որ ապակիէ
պիտի ըլլայ:

Ասեմ. Եւրոպայի պէյը, որ արուստա-
հանդէսի յանձնաժողովն անօրէնութիւն
ներն իր գործ դնելու պաշտօն ունի, մեծ
եռանդով իր պաշտօնին կ'զբաղի: արդէն
արուստահանդէսին բերք ներկայացը-
նողներուն մէկ քանին յատկանալիք տե-
ղերը որոշած եւ զրկուելիք նիւթերուն
զատակարարութեանը մասին պէտք եղած
անշնորհալի իշխաններն ըրած է:

Դաւաւներէն եկած լուրերն ընդ հան-
րապէս արուստահանդէսին յաջողու-
թեանը նպատակաւ են: Պաշտօնէն զա-
նազան նիւթեր կը պատրաստուին զօր-
ւելու: Եւ Զալայ, Եւրոպայի ապրիս եւ
ուրիշ տեղեր՝ բերք ներկայացընողներուն
թիւն օր ըստ օրէ կը շատայ:

Եւրոպայի ամեն տեսակ զէնքերու
հաւաքածոյ մը պիտի գայ, որ արուստա-
հանդէսին մեծ դրանք մօտ պիտի տեղա-
ւորուի, եւ դէմն ալ Օւէյթին Պուռնիի
կայսերական գործարանէն ելած հրացան-
ներով եւ թնդանութիւնով յաղթական
կամար մը պիտի շինուի:

Աւրիշ զանազան բաներէ գտն մայ-
րաքաղաքէն ալ շատ մը անգնողքով ձեռա-
կերաներ պիտի ներկայանան արուստա-
հանդէսին:

Եւրոպայի թէ շարաթն օր մ'ալ կա-
նանց պիտի սահմանուի արուստահան-
դէսը տեսնելու:

Սոս օրերս երկու նորաշէն շոգե-
շարժ Ֆրիգատն պիտի ծախ իշխան արքու-
նի նաւարանէն: Եւս շոգեշարժ Ֆրիգա-
թաններուն մէջնայինները Օւէյթին Պուր-
նուի գործարանը շինուած են:

Մարաքաղաքին յունաց Եւրոպայի
լրագիրը՝ յունաց նոր սահմանադրութեա-
նը համեմատ մեքապոլիսներուն կապ-
ւելիք ամասկանին վրայ Բարձր. մեծ Ե-
պարքոյն կողմէն զաւառաց կառավա-
րիչներուն զրկուած հրամանալի մը կը
հրատարակէ, որուն պիտաւոր խնամներն
արժան կը համարինք քաղել:

« Եւրոպայի օր յոյն հասարակու-
թեան կրօնական գործերուն վերաբերեալ
նոր կանոնադրութիւն մը շինուեցաւ եւ
կեղեցական եւ աշխարհական երեսփոխան-
ներու ժողովի մը ձեռքը եւ կայսերական
կառավարութեան հաւանութեամբ հաս-
տատուեցաւ: »

« Տեսնելով որ յիշեալ կանոնադրու-
թեան մէջ ամասկան թոշակներ կապ-
ւած են Պ. Պօլոյ Պատրիարքարանին
իշխանութեանները զանուոյ ամեն մե-
քապոլիսներուն եւ եպիսկոպոսներուն, եւ
սահմանուած է նոյն կանոնադրութեան
մէջ որ վիճակաց ժողովուրդները նոյնամ-
ասկաններուն համար վճարելիք տու-
քերն են եւ ամուսնութեան եւ արիշ արա-
ւորութեանց համար որոշուած հաստատ
տուրքերն են զատ ուրիշ բան մը չպիտի

վճարեն, եւ մեքապոլիսներն ու եպիս-
կոպոսներն ալ իրաւունք չունին ուրիշ որ
եւ տուրք մը իրենց ժողովուրդէն ուզե-
լու: »

« Աստի որոշուած է, որ յիշեալ ա-
ռաջնորդներն իրենց վիճակին մէջ շրջանի
եղած ժամանակին իրենց դացած տեղե-
րէն տուրք չպիտի պահանջեն: »

« Եւ որովհետեւ յիշեալ Մեքապո-
պոլիսներն ու եպիսկոպոսներն իրենց թո-
շակները յառաջելոյ 1863 տարւոյն յուն-
ուար 15ն պիտի սկսին ստանալ, մինչեւ
այն ժամանակը իրենց իրաւունքներն առ-
ջն պէս պիտի ստանան: »

« Պատրիարքարանին եւ Մեքապո-
լիսներուն ու եպիսկոպոսներուն պիտի լը-
հաւար ամեն մէկ վիճակի բնակչաց վճա-
րելիք տուրքը՝ ամեն մէկ քաղաքի կամ
գեղի բնակչաց թուոյն համեմատ պիտի
որոշուի ու բաժնուի՝ վիճակին ժողովը-
գոյ կողմէն ընտրուած երեսփոխաններու
ժողովն մէջ՝ որ Մեքապոլիսին կամ ա-
ռաջնորդին նախագահութեամբ պիտի
գումարուի: »

« Եւս մէկ տեղեւոր համար որոշ-
ուած գումարներն յատուկ տումարի մը
մէջ պիտի արձանագրուին: Եւս տու-
մարին մէկ օրինակը Մեքապոլիսին քով
պիտի մնայ, ուրիշ օրինակ մը Չորա-
ճիներուն քով, եւ ուրիշ օրինակ մ'ալ
Պատրիարքարան պիտի զրկուի: »

« Եւս մէկ քաղաքի կամ գեղի
յոյն գլխաւորները՝ իւրաքանչիւր բնակչաց
կարողութեանը համեմատ պիտի բաժնեն
տուրքը: »

« Եւս բաժնուումը մինչեւ 1863 յուն-
ուարի 1ը պիտի լինայ: »

« Եւս գործին վրայը Պատրիարքա-
րանէն հրահանգներ պիտի զրկուին Մեքա-
պոլիսներուն, ինչպէս նաեւ աղապիւն
ժողովն կանոնադրութեան յունարէն օ-
րինակը: »

« Եւրոպայի տրամադրութիւններն
ամենուն ծանօթ ըլլալու համար նոր կա-
նոնադրութեան պարունակութիւնը պիտի
հրատարակուի ամեն մէկ գեղերու բնակ-
չած, եւ հրաւեր պիտի ըլլայ իրենց որ
հոգեւոր գլուխներուն ապրուստին համար
իրենց բաժին ինկած տուրքը վճարեն: »

« Եւրոպայի հրամանալիս պարունա-
կութիւնը ձեռ հրամանին ներքեւ զան-
ւաղ պաշտօնատարներուն հաղորդելով՝
պատուիրէք որ ներկայեալ որոշումն
ընեն կատարմանը հսկեն: »

Պայտերական հրամանաւ

Պէթլըքայի օսմանեան դեպքան Պ. Ե-
սեմ. Տիրան պէյը կայսերական հեռագ-
րատանց վերատեսուէ անուանեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ

Եւրոպայի կիրակի օրը սուտորիական շո-
գեւանով մայրաքաղաքը վերադարձաւ: Ե-
սանայէն Խապիւղի քաղաքը Գեր. Տ.
Եւրոպայի նորինալը եպիսկոպոսը:
Եւս շոգեւանով մայրաքաղաքը եկած
են նաեւ Օւէյթիւնի քահանայ մը եւ եր-

7 044-14

